ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Լուսինե Սամվելի Համբարձումյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ՀՀ-ում կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում կենսաթոշակային համակարգին ավելացավ կուտակային բաղադրիչը՝ նպատակ ունենալով ապահովել պետության ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացում և ընդլայնել քաղաքացիների՝ հավելյալ կենսաթոշակ ստանալու հնարավորությունները: Սակայն բարեփոխված համակարգն իր հետ բերել է նոր հիմնախնդիրներ, մասնավորապես՝ ՀՀ-ում ֆինանսական գործիքների սահմանափակության պայմաններում կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների տեղաբաշխման կամ ակտիվների օպտիմալ կառուցվածքի սահմանման խնդիրները: Հիմնախնդիրների մեկ այլ շարք կապված է այն հանգամանքի հետ, որ որպես մասնավոր կենսաթոշակային համակարգին անցման հետևանք՝ անհատներն այժմ կրում են ավելի մեծ անհատական պատասխանատվություն՝ կապված, թե որքան գումար պետք է խնայել կենսաթոշակային տարիքի համար, ով պետք է կառավարի այդ միջոցները և այլն, և անհրաժեշտություն է առաջանում ավելի խորը պատկերացում կազմելու այն գործոնների մասին, որոնք ազդում են անհատի վրա նման ֆինանսական որոշումներ կայացնելիս, ինչն օգտակար կլինի ոլորտը կարգավորող կառույցների և կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար: Այդ գործոնների վերաբերյալ ուսումնասիրությունների որոշ մասը վերաբերում է ֆինանսական ներգրավվածության ազդեցությունը բացահայտելուն, սակայն գիտական շրջանակներում անհրաժեշտ խորությամբ ուսումնասիրված և

գնահատված չլինելու պատճառով հեղինակի կողմից կարևորվել է և գնահատվել է տնտեսամաթեմատիկական մեթոդների օգնությամբ:

Նշվածը հիմնախնդիրների լուծմանն ուղղված հետազոտությունը կարևոր է և ներկայումս անհրաժեշտ, ինչը հիմնավորում է Լուսինե Սամվելի Համբարձումյանի ատենախոսության հրատապությունը և հետազոտության թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության հիմնական նպատակն է բացահայտել կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ֆինանսական ներգրավվածության ազդեցությունը և առաջարկել այդ ազդեցության քանակական գնահատման մոտեցումներ: Նշված նպատակի իրագործման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- բացահայտել ՀՀ-ում բարեփոխված կենսաթոշակային համակարգի առանձնահատկությունները և լուծում պահանջող խնդիրները,
- ուսումնասիրել ֆինանսական ներգրավվածության տնտեսական բովանդակությունը և ֆինանսական գրագիտության հետ դրա փոխկապվածության դրսևորումները,
- վերլուծել կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ֆինանսական գրագիտության, ինստիտուտների նկատմամբ վստահության, ֆինանսական ներգրավվածության և այլ գործոնների ազդեցության մոտեցումները,
- ուսումնասիրել ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառուցվածքի հետ կապված հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ միջազգային փորձը,
- վերլուծել ֆինանսական ներգրավվածության դինամիկան ՀՀ-ում և բացահայտել դրա ընդլայմանը խոչընդոտող գործոնները,
- բացահայտել ՀՀ պարտադիր կենսաթոշակային համակարգի մասնակիցների՝ կենսաթոշակային ֆոնդի ընտրության և կուտակային կենսաթոշակային հաշվի մնացորդը հսկելու հետ կապված վարքագծի պատճառները,

- ուսումնասիրել «կյանքի ցիկլի» մոդելը՝ որպես ՀՀ կենսաթոշակային համակարգի կատարելագործման ուղի, և գնահատել դրա կիրառման դեպքում սպասվող օգուտները և խնդիրները,
- գնահատել ֆինանսական ներգրավվածության և այլ հնարավոր ազդող գործոնների ազդեցության չափերը կենսաթոշակային ֆոնդերում մասնակիցների մասնակցության վրա,
- առաջարկել ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության ընդլայնման հավանական ուղիներ:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 (երեք) գլուխներից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 149 էջի վրա (առանց հավելվածների):

Ներածությունում ներկայացվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանվել են նպատակը ու խնդիրները, ուսումանասիրության օբյեկտը և առարկան, ներկայացվել օգտագործված տեղեկատվության աղբյուրները, ստացված գիտական արդյունքներն ու դրանց գործնական կիրառությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության գնահատման տեսամեթոդական հիմքերը և ժամանակակից դրսևորումները» գլխում** անդրադարձել է կատարվել կենսաթոշակային համակարգերի առանձնահատկություններին և ՀՀ-ում առկա հիմնախնդիրներին, ֆինանսական ներգրավվածության տնտեսական բովանդակությանը, այնուհետև՝ քննարկել կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ազդող գործոնների, այդ թվում՝ ֆինանսական ներգրավվածության վերաբերյալ առկա մոտեցումները: Այս գլխում գիտական նորույթ չի ձևավորվել:

Ատենախոսության երկրորդ՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության վերլուծությունը ՀՀ-ում» գլխում** ներկայացվել է ՀՀ

կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառուցվածքը և առկա հիմնախնդիրները, գնահատվել է ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության դինամիկան, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ կենսաթոշակային ֆոնդերում մասնակիցների վարքագծի վրա ազդող գործոնները: Այս գլխում ատենախոսի կողմից ձևակերպված գիտական նորույթներից առաջին կետն է ձևակերպված:

Ատենախոսության երրորդ՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխկապակցվածության գնահատման կատարելագործման ուղիները» գլխում** հեղինակի կողմից իրականացվել է կենսաթոշակային ֆոնդերում մասնակիցների ներգրավվածության վրա ֆինանսական ներգրավվածության և այլ գործոնների ազդեցությունը գնահատելու մոտեցում տնտեսամաթեմատիկական մեթոդների միջոցով: Ատենախոսության նույն գլխում հեղինակը ներկայացրել է ՀՀ-ում կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարման բարելավման և ֆինանսական ներգրավվածության ընդլայնման ուղիներ: Երրորդ գլխում են ներկայացված ատենախոսությունում տեղ գտած երկրորդից հինգերորդ գիտական նորույթները:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում ներկայացված են հիմնական եզրակացությունները և բարձրացված հիմնախնդիրների լուծման մոտեցումները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել կենսաթոշակային համակարգերի և ֆինանսական ներգրավվածության խնդիրների վերաբերյալ արտասահմանյան և հայ հեղինակների գիտական հետազոտություններն ու մեթոդաբանական բնույթի աշխատանքները, միջազգային կազմակերպությունների հետազոտությունները, հրապարակումները և այլն:

Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում բարեփոխված կենսաթոշակային համակարգն է, իսկ առարկան՝ ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավածության գնահատման հիմնախնդիրներն են:

Հետազոտության արդյունքները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ կենսաթոշակային և ֆինանսական համակարգերում՝ նպաստելով կուտակային կենսաթոշակային համակարգի կատարելագործմանը, կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառուցվածքի բարելավմանը, կենսաթոշակային համակարգում մասնակցության խթանմանը և ֆինանսական ներգրավվածության ավելի խորը ընդլայնմանը:

Ատենախոսությունում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, գործոնային, գիտական աբստրակցիայի, համեմատական, համադրման վերլուծության և այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Հեղինակն ատենախոսությունում ներկայացնում է մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ առանձնացնում է հետևյալ կետերը.

1. եկամտաբերության և ռիսկի գնահատման միջոցով հիմնավորվել է ՀՀ-ում՝ գործող «կյանքի ոճի» մոդելի համեմատ «կյանքի ցիկլի» մոդելի ֆոնդերն ավտոմատ ընտրվող կենսաթոշակային ֆոնդ սահմանելու նպատակահարմարությունը,

2. հնարավոր ռիսկերի, միջազգային փորձի և տեղական շուկայի առանձնահատկությունների հաշվառումով մշակվել է ՀՀ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ «կյանքի ոճի» գործող մոդելից «կյանքի ցիկլի» մոդելին աստիճանական անցման մոտեցում,

3. հիմնավորվել է կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգ ունեցող երկրներում կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության և ֆինանսական ներգրավվածության, ֆինանսական գրագիտության, ֆինանսական շուկաների

զարգացվածության, գործող կենսաթոշակային համակարգի արդյունավետության միջև գոյություն ունեցող վիճակագրական նշանակալի կապը, և առաջարկվել են այդ կապերը գնահատող բազմագործոն ռեգրեսիոն մոդելներ,

4. բացահայտվել են ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության ավելի խորը ընդլայման վրա նեոբանկերի և չելլենջըր բանկերի ազդեցության դրսևորման ուղիները՝ շեշտադրելով դրանց ներդրման հետ կապված խնդիրները և առավելությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից կարևորվել են հետևյալները.

1. Աշխատանքում կատարվել է կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության վրա ֆինանսական գրագիտության, ինստիտուտների նկատմամբ վստահության, ֆինանսական ներգրավվածության և այլ գործոնների ազդեցության մոտեցումների բազմակողմանի վերլուծություն, սակայն աշխատանքն առավել կշահեր, եթե ֆինանսական գրագիտության մասով առավել խորը վերլուծություն իրականացվեր, մասնավորապես՝ ներկայացվեին տարբեր երկրներում առկա ուսումնական ծրագրերը, միջազգային փորձի ստանդարտները և դրանց համապատասխանությունը ՀՀ-ում գործող ծրագրերին՝ ՀՀ-ում ֆինանսական գրագիտության ցածր մակարդակի պատճառները բացահայտելու նպատակով:
2. Ատենախոսության առաջին գիտական նորույթը՝ «բացահայտվել են ՀՀ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կողմից կենսաթոշակային ֆոնդ չընտրելու հետ կապված չեզոք վարքագծի վրա ազդող գործոնները» թերևս լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի, որի հետևանքով ստացված արդյունքները չէին հանգեցնի պարզ ճշմարտության:
3. «Եզրակացություններ» բաժնում ատենախոսը նշել է հետևյալը. «ՀՀ-ում ֆինանսական ներգրավվածության բարձրացման տեսանկյունից կարևոր դեր

կարող են խաղալ նեոբանկերը և չելլենջըր բանկերը, քանի որ դրանք կարող են լուծել ՀՀ-ում ֆինանսական ծառայություններից չօգտվելու հիմնական խնդիրները, (անբավարար միջոցները, գործարքային բարձր ծախսերը եւ ֆինանսական հաստատությունների հեռավորությունը)»: Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության մեջ ամենազարգացածը բանկային ոլորտն է. բանկային ծառայությունները հասանելի են թե՛ բջջային կապի, թե՛ համակարգիչների միջոցով, իսկ այդ ծառայություններից բավարար չափով չօգտվելու պատճառները, մեր կարծիքով, առավել շատ կապված են համացանցից և նոր տեխնոլոգիաներից օգտվելու դժվարությունների, ինչպես նաև եկամուտների ցածր մակարդակի հետ: Ուստի աշխատանքն առավել կշահեր, եթե ամբողջությամբ թվային գործող բանկերի առավելություններն ուսումնասիրելուց բացի անդրադարձ կատարվեր վերոնշյալ հարցերին:

4. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական բնույթի թերություններ, մասնավորապես՝ տպագրական վրիպակներ (օրինակ՝ 18, 34, 37, 65, 90, 94, 112, 121, 130, 140 էջերում):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այդուհանդերձ, արված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժեքավորությունը, և կարող են դիտարկվել որպես առաջարկություններ՝ հետագա հետազոտություններ իրականացնելիս:

Ատենախոսությունն ունի դրական արժանիքներ, կատարված է ինքնուրույն հետազոտություն, վերլուծական աշխատանք: Հետազոտության արդյունքում առաջարկված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների ձևավորման նկատմամբ գոյություն ունեցող պահանջներին:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթները և արդյունքները:

Սեղմագրում ներկայացված 6 (վեց) գիտական հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում: Դրանք արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը և որպես գիտական նորույթ հեղինակի կողմից ներկայացված մոտեցումները:

Այսպիսով, Լուսինե Սամվելի Համբարձումյանի՝ **«Կենսաթոշակային ֆոնդերի և ֆինանսական ներգրավվածության փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում» թեմայով** պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նա ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

տնտեսագիտության դոկտոր՝ **Հ. Գ. Մնացականյան**

5 սեպտեմբերի 2022թ.

Հ. Գ. Մնացականյանի ստորագրության

իսկությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար

բանասիրական գիտությունների թեկնածու՝ **Մ. Վ. Հովհաննիսյան**

5 սեպտեմբերի 2022թ.